

կարծաւրէն յանպատրաստից արկանել զթագաւորն Պարսից զգլխով նորա: 9 Եւ ինքն զուարճացեալ, լինէր խաւսնակից ի մէջ թագաւորացն երկոցունց, դեսպան ձիով վաղ հասուցանէր ի գաւառն Այրայրատու ի մեծ ի գեղն ընջին արթունի, որում Արդեանսն կոչէն, առ թագաւորն Յայոց Պապ. եւ զայր յանդիման լինէր թագաւորին: 10 Մեծապէս մեծարեցաւ ի նմանէն. եւ ի ժամ ընթրեացն հրաման ետ արքայն Պապ, տանել պատմուճան ագուցանել մարդպետին Դղակայ. եւ ագուցին նմա դրատս եւ վարտիս: 11 Եւ էր հանդերձն անհեղեղ մեծութեամբն, զի խորշ զխորշիւ իջանէր, մինչ զի ոչ կարէր հանդերձել զանձն իւր, զի պատեաց զնա մեծութիւն հանդերձոյն: 12 Եւ ագուցեալ զպատմուճանն մեծ, եւձ զգաւտին ընդ մէջ իւր՝ զորմէ թուրն կախէր. եւ սուսեր ընդ մէջ ածեալ, եւ խորշ ի գաւառոյ դրատիցն իջեալ, զթուրն եւ զսուսերն ծածկեր: 13 Իսկ զվարտիսն զգեցեալ, եւ մոյկս ագուցեալ, եւ զնրանն յազդեր կապեալ, եւ ի վերայ նրանին խորշն ի վարտեացն իջեալ անկեալ ի վերայ նրանին՝ ծածկեալ մինչեւ ի սրունսն. եւ ոչ ինչ իմացաւ Դղակ՝ թէ այն մեծութիւն հանդերձոյն չարոյ նորա իցէ այն: 14 Իսկ յինն ժամ աւուրն կոչեցին զԴղակն, եւ ասէն. Կոչեն զքեզ յընթրիս ի ներքս յարթունիս: 15 Իսկ յորժամ մուծին ի փող տանցն՝ յորում արքայն էր, եւ էր փողն ընդ երկար, բազում երդս լոյսիջոյցս էր թողեալ, եւ տանէին զնա ընդ այն, կայր շուրջ սպարակիրն փակեալ սակրաւորքն, եւ զերդս ամենայն լուսոյն ծածկէին: 16 Ապա մտեալ շուրջ զնովաւ ի տեղուջն՝ ձգձգէին զնա սպարակիրքն: 17 Իսկ նա թէպէտ տանէր ձեռն ի զէն ի խորշխորշսն հանդերձիցն պատատելոցն՝ զոր էր զգեցեալ, ոչ զմի զէն ոչ կարաց գտանել:

18 Ապա զի էր ինքն Դղակն այր մեծ եւ անձնեայ, քաջ հարուստ ոսկերաբ, սակայն ասպարակիր մարդկանն պատեցին զնովաւ, եւ բարձին զնա վերըմբարձ, եւ տանէին զնա մինչեւ ի դուրս տաճարին արթունի: 19 Իսկ իբրեւ ետես թագաւորն՝ թէ անդր տանին, ասէ. Մի՛ այսր, մի՛ այսր, այլ մուծէք զդա ի տուն պատմուճակացն: 20 Զանզի ի փողին զաւրբ սպարակրացն մուծին զնա ի ներքս ի տունն պատմուճակացն. կապեալ ձեռս յետս, այս ինքն ուր թագ արթունի դնէին. եւ անդէն խաւսել սկսաւ Դղակն եւ ասէ. Ասացէք ցարքայ, գոգէք, ես այս մահու արժանի էի, բայց քեզ արժան էր զիս ի հրապարակի սպանանել, եւ ոչ ի տան թագաց¹ սպանանել, եւ զքո թագդ արեամբ շաղախել: 21 Եւ զայս միայն ժամանեաց ասել. եւ անդէն ի վանսն պատմուճակացն փողոտեցին զնա, եւ հատին զգլուխ նորա, եւ հանին հարին ի նիզակի, եւ կանկնեցին ի հրապարակին արթունի:

1 Օրինակ մի՝ թագաւորաց